

„Ալմաստ” բաց բաժնետիրական ընկերության տարեկան ընդհանուր ժողովի

Երկու հազար տասնվեց թվականի հունիսի տասին, ժամը՝ 15:00-ին տեղի ունեցավ „Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ռուբինյանց 28” հասցեում „Ալմաստ” բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև „Ընկերություն”) բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (այսուհետև „Ժողով”):

Մասնակցում էր Ընկերության թվով 418217 (չորս հարյուր տասնութ հազար երկու հարյուր տասնյոթ) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի սեփականատերերից թվով 372 446 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի 89,055% սեփականատեր „ԷԼԻՏ-ՆՆ ՖԻՆԱՆՍ ՔԱՄՓՆԻ” սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս կառավարիչ կազմակերպություն „ՄԲՑ” փակ բաժնետիրական ընկերության, որի անունից հանդես է գալիս „ՄԲՑ” ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռուդիկ Մկրտումյանը:

Ապահովված էր Ժողովի անցկացման համար անհրաժեշտ քվորումը:

Ժողովին մասնակցում էր ընկերության Տնօրենների խորհրդի անդամ Հովհաննես Հարությունյանը, տնօրենի ժ.պ. Վանիկ Հովսեփյանը, ընկերության վերստուգող Ալեքսանդր Հարությունյանը, հրավիրված էր Ընկերության գլխ. հաշվապահ Դոնարա Սայամյանը:

Ժողովը նախագահում էր խորհրդի անդամ Հովհաննես Հարությունյանը՝ Աննա Առուստամյանի քարտուղարությամբ:

Օր ա կ ա ր գ.

1. Ընկերության տարեկան ժողովի Հաշվիչ հանձնաժողովի անդամների ընտրության և հաստատման հարցը:
2. Ընկերության տնօրենի զեկույցը 2015 թվականի ընթացիկ գործունեության վերաբերյալ:
3. Ընկերության 2015թ.գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ վերստուգողի եզրակացության ներկայացումը:
4. Ընկերության 2015թ. գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ աուդիտորական եզրակացության ներկայացումը:
5. Ընկերության 2015թ. գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը:
6. Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի, դրա անդամների ընտրության և հաստատման հարցը:
7. Ընկերության վերստուգողի և աուդիտոն իրականացնող անձի ընտրության և հաստատման հարցը:

ԼՄԵՑԻՆ – հարց 1՝

Առաջին հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ Ընկերության Խորհրդի անդամ Հովհաննես Հարությունյանը և առաջարկեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի քանակական կազմը՝

